**ՆԱԽԱԳԻԾ**

# ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՌԱՖԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2013-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Տիգրան Ռաֆիկի Խաչատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցի 2013-2015 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով, քանի որ վերոնշյալ տրանսպորտային միջոցը ենթարկվել է վթարի, որի հետևանքով 2013 թվականից գտնվում է անսարք վիճակում և ենթակա է հաշվառումից հանման: Վերոնշյալ մեքենայի համար առաջացել է գույքահարկի պարտավորություն, որը 2016 թվականի նոյեմբերի 08-ի դրությամբ կազմել է ընդամենը 256615(երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից մայր գումարը կազմել է 166000 (մեկ հարյուր վաթսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 90615 (իննսուն հազար վեց հարյուր տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ: 2016 թվականի նոյեմբերի 08-ին վճարել է գույքահարկի մայր գումարը՝ 166000 (մեկ հարյուր վաթսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, 8-րդ, 9-րդ կետերով և հիմք ընդունելով Տիգրան Ռաֆիկի Խաչատրյանի (հաշվառված քաղաք Գյումրի Մելիքյան փողոց տուն 2 հասցեում, նույնականացման քարտ 0024705084, տրված 2014 թվականի մայիսի 15-ին, ոստիկանության 016-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 2505820368) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2016 թվականի դեկտեմբերի 01-ին N14667 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Տիգրան Ռաֆիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող LEXUS GX 470 մակնիշի, 45 QD 001 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի 2013-2015 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ՝ ազատելով գույքահարկի տույժի 90615 (իննսուն հազար վեց հարյուր տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Ռ.ՍԱՆՈՅԱՆ**

**Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ**

**Լ.ԶԻԼԱՎՅԱՆ**

**Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**

Կատ. Ս. Մինասյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## <<ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՌԱՖԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2013-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Քաղաքացի Տիգրան Ռաֆիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող LEXUS GX 470 մակնիշի, 45 QD 001 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի 2013-2015 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելը պայմանավորված է նրանով, որ վերոնշյալ տրանսպորտային միջոցը ենթարկվել է վթարի, որի հետևանքով 2013 թվականից գտնվում է անսարք վիճակում և ենթակա է հաշվառումից հանման: Վերոնշյալ մեքենայի համար առաջացել է գույքահարկի պարտավորություն, որը ժամանակին չի վճարվել պարտավորության գոյացման մասին չիմացության պատճառով և այն 2016 թվականի նոյեմբերի 08-ի դրությամբ կազմել է ընդամենը 256615(երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից մայր գումարը կազմել է 166000 (մեկ հարյուր վաթսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 90615 (իննսուն հազար վեց հարյուր տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ: 2016 թվականի նոյեմբերի 08-ին վճարել է գույքահարկի մայր գումարը՝ 166000 (մեկ հարյուր վաթսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## <<ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՌԱՖԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2013-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Քաղաքացի Տիգրան Ռաֆիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2013-2015 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու մասին>> որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: